Էջմիածին. — La Cathédrale d'Etchmiadzin.

պայծառանալ՝ հաստատութեամբ կաթողիկոսական աթոռոյ փոխադրելոյ կամ բաժանելոյ 'ի Սսայ, և նախապատիւ համարելով ամենայն պատրիարքաց և կաթուղիկոսաց Հայոց: Ի սկզբանէ ԺԷ դարու և այսր բազում շինութիւնս արարին կաթուղիկոսունքն Մովսէս, Փիլիպոս, Ղազար, Սիմոն և այլք: Յետոյս այս հած զմեծ կամ զարտաքին պարիսպս Էջմիածնայ որ և բրգամբք զարդարեալ է, և իբր փարախաւ ունի զչրջապատն, չորիւք դրամբք. կայ և ներքին պարիսպ դրամբք հինգ. 'ի միջոցի կրկին պարսպացն կան կրպակք, ախոռք, կալք, բաղանիք, և այլն: Մինչոց ներքին պարսպին բաժանեալ է 'ի կրկին քառանկիւնս և 'ի պէսպէս շինուածս, որպիսիք են Վեհարանն՝ որ է բնակարան կաթուղիկոսին, սենեակք միաբանիցն, սեղանատունն, և այլն: Ի միջակի պարսպիս և համբրէն վանացն կայ ոսկեղերա-հռչակ կաթուղիկէն և մայր եկեղեցեաց Հայոց, շինեալ նախ 'ի Գրիգորէ և 'ի Տրդատայ, նորոգեալ յետ 80 ամաց, և գարձեալ քարաշէն կանգնեալ յամին 483 'ի Վահանայ Մամիկոնեանց, վերակացութեամբ Ղազարայ Փարպեցւոյ, անփոփոխ պահելով զառաջին չափն և զձև, 'ի վերայ տեղւոյն Իջման Միածնին. և 'ի մէջ է դարու կրկին նորոգեալ՝ քարակերտ շինութեամբ գմբեթին 'ի Կոմիտասայ կաթողիկոսէ, և այլով ինչ մասամբ 'ի Ներսիսէ Շինողէ. և յետ հազար ամաց գարձեալ նորոգեալ յաւելուածովք խորանաց և կաթուղիկէից. մնան տակաւին հնութիւնք 'ի տաճարիս նուիրելոյ Տիրամօրն և կոչեցելոյ Շողակաթ. որ երկայնաձև քառակուսի է, և կամարք բաժանեալ 'ի թեւս, ունելով իբրև 96՝ ընդ երկայնն 'ի ներքուստ և 88՝ ընդ լայն. և 'ի վերայ չորից ստուար սեանց սրածայր կամարաձևն 62՝ բարձր 'ի ներքուստ. եօթն խորանք են, արևելեանն հին և աւագ բեմն Շողակաթն, հարաւայինն՝ իջման տեղին. և մի 'ի խորանացն 'ի վերայ արևմտեան մեծի դրանն է, 'ի մինչև դստիկոնի եռայարկ Զանգակատանն, յորոյ 'ի վերնումն են զանգակքն, և մի 'ի նոցանէ ձուլեալ 'ի Դիպլեթ աշխարհի թաթարաց, նոցին տաւնից և սրբազան բանի գրոշմածով. առաջի արևմտեան դրանն կայ Ժամատուն ամարանի. և գրունք 'ի հարաւոյ և 'ի հիւսիսոյ. աւանդատունք յաջմէ և յահեկէ աւագ բեմին, մին նշխարատուն և պահարան սրբոց՝ նշխարաց և գանձուց. յորում պահին Գեղարդն աստուածամուխ, փայտեայ պատկեր ձեռագործ Յովհաննու աւետարանչի՝ որ կարծի բերեալն 'ի Դարուանից եկեղեցւոյն (86),